



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾՄԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 օգոստոսի 2014 թվականի N Մ- 760 -Ա  
քաղ. Երևան

**«ՎՈՐՂԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾՄԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ, ԱՐԱԳԱԾՈՏՆԻ, ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ, ԼՈՌՈՒԻ, ՍՅՈՒՆԻՔԻ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐԻ 160 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՐԵՄԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 30-ի N 07/80-2/10743-14 և հուլիսի 25-ի N 06/3-3/10399-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հուլիսի 29-ի N 02/5421-14, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի հուլիսի 30-ի N 07/15/4024-14 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի հուլիսի 29-ի N ԶԲ/ԱնՄ-4/5930-14 եզրակացությունները, որոշում է.*

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռումանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 109,590,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Ամառային ճամբարի կազմակերպում Հայաստանի Հանրապետության Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Սյունիքի և Տավուշի մարզերի 160 համայնքների երեխաների համար» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նորալուսին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08602616) 2014 թվականի հունիսի 18-ին կնքված N WVA/12 ADPs/SC-14/001/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ճամբարի կազմակերպում՝ 109,590,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Սյունիքի ու Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ